«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ *Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը*

Հաստատություն՝ 130 Մսուր – Մանկապարտեզ

Դաստիարակ՝ Լիաննա Բաբայան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

1. ***Հայրենաճանաչողության կարևորությունը անհատի ձևավորման գործընթացում. Հայրենաճանաչողության ձևավորման մեթոդները----------4***
2. ***Ավագ նախադպրոցական տարիքում հայրենաճանաչողություն բարձրացման սեփական փորձը----------8***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի ուսումնասիրության կարևորությունն ու արդիականությունը. <<Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչությունից>> արտահայտությունը միայն, փաստում է հետազոտական թեմայի արդիականությունը: Կրթությունը հասարակության և պետության հենարանն է, մանկավարժը՝ հիմնասյունը: Սրանք լոկ միայն խոսքեր չեն: Մանկավարժի անտրտունջ և անխոնջ աշխատանքի շնորհիվ է կրթվում ու դաստիարակվում մեր հայրենիքի վաղվա արժանավայել քաղաքացին և հայոց բանակի քաջարի զինվորը: Այն սերունդը, որը վաղը անառիկ է պահելու հայրենի եզերքի սահմանները՝ ապահովելով հուսալի ու խաղաղ արարում հայ ժողովրդի համար: Իրեն հայրենիքի մասնիկն է համարում միայն այն անհատը, որն իրապես սիրում է իր հայրենիքը, իսկ սիրել առանց ճանաչողության գրեթե անհնար է: Սա, իհարկե խոսում է հետազոտական թեմայի արդիականության մասին:

Իմ մանկավարժական պրակտիկայում թեման առավել մեծ հնչեղություն ստացավ 44-օրյա արհավիրքից հետո, երբ ՀՀ տեսարժան վայրերից մեկում ծանոթացա մի կնոջ հետ, ով զրույցում նշեց, որ մինչ այս չէր պատկերացնում Սևանի տեղանքը, ու երբեք չէր մտածի, որ վտանգն այդքան շուտ կհասնի Սևանին…

Հայրենաճանաչություն տերմինը հայրենի լեզվի բառապաշարում ակտիվորեն սկսեց կիրառվել 2009թվականից, երբ մեկնարկեց <<Արի տուն>> հայրենաճանաչողական: Վերջինիս նպատակն էր սփյուռքի հայ երիտասարդությանը հայոց լեզվին, հայոց պատմությանն ու մշակույթի գորհարներին ծանոթացնելը: Այսօր, սակայն, թեման արդիական է նաև հայրենիքում ապրող ու կրթություն ստացող մատաղ սերնդի ու, հաճախ նաև հասուն մարդկանց համար: Սրանք, իհարկե, փաստեր են, որ խոսում են ընտրված թեմայի արդիականության մասին:

Աշխատանքի *նպատակն է* ուսումնասիրել նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

- Քննել հայրենաճանաչողության կարորությունը անհատի ու արժեհամակարգի ձևավորման գործընթացում,
- Ներկայացնել հայրենաճանաչողության բարձրացման մեթոդներն ու ուղիները ավագ նախադպրոցական տարիքում:

1. *Հայրենաճանաչողության կարևորությունը անհատի ձևավորման գործընթացում. Հայրենաճանաչողության ձևավորման մեթոդները*

Հոգեբանության մեջ ընդունված է առանցքային դեր վերապահել ընտանիքին անհատականության ձևավորման գործում, քանի որ հենց այս սոցիալական հաստատությանը է վստահված հիմնական կրթական գործառույթը:

Երեխաները որդեգրում են ոճեր, վարքագիծ, դերեր, ռազմավարություններ, մտածողության տեսակներ, զգացմունքների արտահայտում այն մեծահասակներից, ովքեր իրենց կյանքում կարևոր տեղ են զբաղեցնում: Ծնողներից երեխան անգիտակցաբար ժառանգում է արժեքներ և իդեալներ, դրական և բացասական հատկություններ, ձևավորում են աշխարհայացք, կարծրատիպեր: Ընտանիքը՝ որպես հասարակության ամենափոքր սոցիալակն բջիջ, կրում է այն արժեքներն ու հատկանիշների համախումբը, որը բնութագրական է տվյալ հանրությանը, ազգին:

Հետևաբար կարող ենք վստահորեն ասել, որ անձի ինքնաճանաչողությունը թերի է, երբ չկա հայրենաճանաչողություն: Անձը, որը չգիտի իր հայրենիքի պատմությունը, չի տիրապետում սեփական լեզվին, ազգային մշակույթին ու ճարտարապետությանը չի կարող լիարժեք ձևավորվել նախ որպես անձ, ապա նաև անհատ ու էթնոկիր: Մշակույթը, բարոյական արժեքները, հասարակության մեջ ընդունված կանոնները ներարկվում են ի ծնե և հանգեցնում անհատականության ձևավորմանը:

Ժամանակի ընթացքում ծնողներից մեկ անգամ լսված հրահանգներն ընկալվում են որպես ներքին ձայն: Աստիճանաբար ձևավորվում են բարոյական հատկություններ՝ խիղճ, պատիվ, բարոյականություն, հայրենասիրություն: Յուրաքանչյուր մարդ օգտագործում է մանկության տարիներին ձեռք բերած գիտելիքները և զարգացնում է իր սեփական պատկերացումները հասարակության կողմից ընդունելի վարքի մասին:

Միայն հայրենաճանաչողությամբ կարելի է հասնել հայրենիքի հանդեպ սիրով արտահայտված բարոյական դիրքորոշման, հպարտանալ նրա հաջողություններով և ձեռքբերումներով, հարգանք տածել նրա պատմական անցյալի, մշակութային ավանդույթների նկատմամբ, դժվարին պահերին օգնելու պատրաստակամություն ցուցաբերել, պաշտպանել հայրենիքի անկախությունը նվաճողների առջև, անհրաժեշտության դեպքում նաև զոհաբերության գնալ՝ հանուն նրա անկախության և ազատության:

Հայրենիքի ճանաչողությունը նրա զարգացման հիմքն է, պաշտպանության անկյունաքարը և յուրաքանչյուր քաղաքացու պարտքն ու պարտականությունը:

20-րդ դարի վերջին 21-րդ դարի սկզբին երկրում տեղի ունեցած արմատական վերափոխումները կտրուկ շրջադարձ են սահմանել Հայաստանի ժամանակակից պատմության մեջ, որոնք ուղեկցվում են հասարակության և գիտակցության սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր ոլորտներում փոփոխություններով: իր քաղաքացիների: Կտրուկ նվազել է հայկական մշակույթի, արվեստի, կրթության կրթական ներուժը՝ որպես հայրենասիրության ձևավորման կարևորագույն գործոններ:

Նախադպրոցականների շրջանում հայրենաճանաչողությունը համակարգված և նպատակաուղղված գործունեություն է սաների մեջ բարձրացնելու հայ մշակույթի՝ ազգային երգ ու պարի, ավանդույթների, սովորույթների, ազգային խորհրդանիշների ու տոների, մասին գիտելիքները:

Ինչպես արդարացիորեն նշում է Լիխաչովը, չպետք է մոռանալ մշակութային անցյալի, հուշարձանների, գրականության, լեզվի, արվեստի մասին... Ժողովրդական տարբերությունները կմնան 21-րդ դարում, եթե մտահոգվենք հոգու դաստիարակությամբ, այլ ոչ թե միայն գիտելիքի փոխանցմամբ» (Դ. Ս. Լիխաչով)[1]:

Այդ իսկ պատճառով հայրենի մշակույթը, ինչպես հայրն ու մայրը, պետք է դառնա երեխայի հոգու անբաժանելի մասը, անհատականությունը շարունակող սկիզբը:

Ելնելով վերը նշվածից՝ մանկապարտեզում պետք է սահմանվեն հետևյալ առաջնահերթությունները[2].

1. Շրջապատող՝ առաջին անգամ երեխայի հոգին արթնացնող, նրա մեջ գեղեցկության զգացում, հետաքրքրասիրություն սնուցող, առարկաները պետք է լինեն ազգային: Սա օգնում է երեխաներին շատ վաղ տարիքից հասկանալ, որ իրենք հնագույն ու ստեղծագործ ժողովրդի մի մասնիկն են:
2. Ազգային բանահյուսությունը (հեքիաթներ, երգեր, ասացվածքներ, ասացվածքներ, շուրջպար և այլն) պետք է սերտորեն կիրառվի խոսքի զարգացման և այլ պարապմունքների ժամանակ: Բանավոր ժողովրդական

[1] Высказывания лихачева о народной культуре
Источник: https://dragon72.ru/vyskazyvaniya-lihacheva-o-narodnoy-kulture, հասանելի է:
[2] Данилюк А. Я., Кондаков А. М., Тишков В. А. Концепция духовно-нравственного развития и воспитания личности гражданина России. – М. : Просвещение, 2009. – С. 23.

արվեստում, ինչպես ոչ մի տեղ, պահպանվել են հայ ժողովրդի բնավորության գծերի առանձնահատկությունները, նրա բնորոշ բարոյական արժեքները, բարության, գեղեցկության, ճշմարտության, քաջության, աշխատասիրության և հավատարմության գաղափարը: Երեխաներին ծանոթացնելով ասացվածքներին, հանելուկներին, հեքիաթներին՝ մենք դրանով ծանոթացնում ենք նրանց ազգային ու համամարդկային բարոյական արժեքներին: Հայ ժողովրդական բանահյուսության մեջ բառը, երաժշտական ռիթմը, մեղեդայնությունը յուրովի են համակցված: Բանավոր ժողովրդական արվեստի ստեղծագործություններում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում աշխատանքի նկատմամբ հարգալից վերաբերմունքը, մարդկային ձեռքի հմտության հանդեպ հիացմունքը: Դրա շնորհիվ բանահյուսությունը երեխաների ճանաչողական և բարոյական զարգացման, հայրենաճանաչողության բարձրացման ամենահարուստ աղբյուրն է:

3. Հայրենասիրական դաստիարակության և հայրենաճանաչողության գործում մեծ տեղ են զբաղեցնում ժողովրդական տոներն ու ավանդույթները: Նրանք կենտրոնացնում են դարերի ընթացքում կուտակված լավագույն դիտարկումները եղանակի փոփոխության, թռչունների, միջատների և բույսերի վարքագծի և այլն մասին: Ավելին, այս դիտարկումներն ուղղակիորեն կապված են աշխատանքի և մարդկային հասարակական կյանքի տարբեր ասպեկտների հետ՝ իրենց ողջ ամբողջականությամբ և բազմազանությամբ:
4. Մեր աշխատանքի մեկ այլ կարևոր ուղղություն է երեխաներին ժողովրդական դեկորատիվ նկարչությանը ծանոթացնելը: Նա, ներդաշնակությամբ ու ռիթմով գերելով հոգին, կարողանում է երեխաներին գերել ազգային կերպարվեստով:
5. Բնության, շրջակա միջավայրի ուսումնասիրությունը մանկավարժության կարևորագույն ուղղություններից է: Այն ոչ միայն բնակավայր է, այլև հայրենի կողմ՝ Հայրենիք: Ծանոթանալով տարածաշրջանի բնությանը՝ մենք լուծում ենք ոչ միայն բնապահպանական խնդիրներ, այլև սեր ենք սերմանում բնության յուրաքանչյուր առարկայի ու առհասարակ հայրենի եզերքի նկատմամբ:
6. Մեր երկրի պատմական անցյալի, նրա խորհրդանիշների հետ ծանոթությունը նոր, բայց շատ հետաքրքիր ուղղություն է երեխաների մոտ հայրենասիրության և հայրենաճանաչողության բարձրացման գործում: Իսկ ինչո՞ւ են նախադպրոցականներին անհրաժեշտ երկրի պատմության մասին գիտելիքները: Ի վերջո, պատմության համակարգված ընթացքը դպրոցի խնդիրն է: Այո իհարկե. Բայց որպեսզի այս դասընթացը լավ սովորի երեխաներին, անհրաժեշտ է

նույնիսկ դպրոցից առաջ նրանց մեջ ձևավորել նախնական վստահելի պատկերացումներ մեր հայրենիքի պատմության մասին, հետաքրքրություն ապագայում այն ուսումնասիրելու համար:

2. *Ավագ նախադպրոցական տարիքում հայրենաճանաչողություն բարձրացման սեփական փորձը*

Հայրենաճանաչողության թեման մեր մանկապարտեզում կարմիր գծի նման տարվում է բոլոր ուսումնասիրվող թեմաներին զուգահեռ: Առաջին հերթին դա տեղի է ունենում տոնացույցի միջոցով: Ազգային տոնածիսական համակարգի յուրաքանչյուր տոն լայն հնարավորություն է տալիս երեխաներին ծանոթացնել տոնի խոհրդին, նրա հետ կապված ավանդույթներին ու սովորույթներին, երգ ու պարին, ծիսակարգին: Հայկական ժողովրդական տոները որպես ազգային մշակույթի ավանդույթներին ծանոթանալու միջոց, հրաշալի նյութ են պարունակում: Սրանց միջոցով սեփական արմատներին ժողովրդի պատմությանը, մշակույթին, աշխարհայացքին ծանոթանալու

լայն հնարավորություններ են բացվում: Զատկի, Ամանորյա, Սուրբ Ծննդյան, Վարդավառի, Տյառնընդառաջի տոները մանկապարտեզում նշում ենք նախապես ծանոթացնելով սաներին տոնի խորհրդին, դրա հետ կապված ազգային ավանդույթներին ու սովորութույթներին:

Հաճախ տոնին նվիրված միջոցառմանը պատրաստվելու համար տևական ժամանակ է պահանջվում, որի ընթացքում երեխաների հետ միասին նախապատրաստում ենք յուրաքանչյուր մանրուք, որ անհրաժեշտ է տոնը հավուր պատշաճի կազմակերպելու համար: Ծանոթանում ենք յուրաքանչյուր դետալի խորհրդին, կիրառման եղանակներին ու նպատակներին, որոնք յուրաքանչյուրը, անխոս, բարձրացնում են սաների հայրենաճանաչողությունը: Ազգային-հայրենասիրական երգ ու պարը, ավանդույթների ու սովորույթների բեմականացումը մոտեցնում են երեխաներին արմատներին, ծանոթացնում նրանց ավանդականին ու ժողովրդականին՝ միևնույն ժամանակ հետաքրքիր ու հաճելի դարձնելով ուսումնառության գործընթացը, սեր ու հարգանք սերմանելով ազգայինի ու ժողովրդականի, ավանդականի ու հոգևորի նկատմամբ:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները,

գիտելիքները: Սանը քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել:

Բացի ազգային-ժողովրդական տոներից, հայրենաճանաչողության բարձրացմանը նպաստում է նաև ժողովրդական բանահյուսության նմուշների ներկայացումը, բեմականացումը: Հայկական ժողովրդական հեքիաթները ճոխ են, հարուստ, արտահայտում են մայրենի լեզվի ճշգրտությունն ու արտահայտչականությունը, լի են փոխաբերական, դարձվածային արտահայտություններով և հրաշալի միջոց են երեխաների խոսքի զարգացման, հաղորդակցային հմտությունների բարելավման համար: Հայկական ժողովրդական հեքիաթները հրաշալի նյութ են պարունակում ավագ խմբում խոսքի զարգացման համար: Խոսքը գործիք է մարդու հոգեկանի բարձրագույն բաժինների զարգացման համար: Երեխային սովորեցնելով մայրենի խոսքը՝ մեծերը նպաստում են նրա ինտելեկտի զարգացմանը:

Հայ ժողովրդական հեքիաթները հնագույն՝ հազարամյակների պատմություն ունեն: Դեռ շատ հին ժամանակներից դրանք ճանապարհ են անցել, խոսքից խոսք փոխանցվել, պատմվել խիզախ, սովորական մարդկանց մասին, ովքեր կարողանում էին դիմակայել ինչպես բնության ահռելի ուժերին, այնպես էլ չարին, հարուստներին, որոնք ճնշում էին ժողովրդին: Հայկական ժողովրդական հեքիաթների սյուժեները շատ ընդհանուր բան ունեն այլ ժողովուրդների կողմից ստեղծված հեքիաթների հետ: Բայց պատմվածքի ձևը, գունագեղ լեզվի «զարդարանքները», հերոսների անուններն ու բնութագրերը առանձնացնում են հայկական հեքիաթի հատուկ ազգային գրավչությունը: Ստեղծվելով տարբեր դարերում՝ հայկական ժողովրդական հեքիաթներն արտացոլում են ինչպես սոցիալական հակասությունները, այնպես էլ մարդկանց իմաստությունը՝ ձգտելով ազատ և արժանապատիվ կյանքի: Հայ ժողովուրդների հեքիաթների առանձնահատկությունը նաև երգիծական մոտեցումն է այն պատմվածքին և հումորին, որը հերոսները չեն կորցնում որևէ իրավիճակում: Նման հեքիաթներ կարդալը հաճույք է ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխայի համար: Նրանք չունեն բարդ նյութ,

հեշտությամբ են ընկալվում և չեն ծանրաբեռնում երեխաների հոգեբանությունը, միշտ ավարտվում են բարի ուժերի հաղթանակով: Հետևաբար հայկական ժողովրդական հեքիաթներին ծանոթացումը, դրանց շուրջ բերմադրությունները, կերպարների կենդանացումը ոչ միայն կնպաստեն երեխայի մտահորիզոնի, հոգեկերտվածքի, ստեղծագործականության բարձրացմանը, այլև հայրենաճանաչողությանը, սեփական արմատների գիտակցմանը: Այդպիսի հրաշալի նյութ է պարունակում <<Բարեկենդան>> հեքիաթը:

Հեքիաթի ընթերցումից ու բեմականացումից զատ, սովորաբար, երեխաներին պատմում ենք նաև <<Բարեկենդան>> տոնի ու դրա ազգային արմատների մասին, բեմադրում ենք հեքիաթը՝ քննարկելով յուրաքանչյուր կերպարին: Բացի այդ երեխաները մասնակցել

են «Հեքիաթերեն» մանկական ինտերակտիվ տիկնիկային թատրոնի կողմից Գրականության և արվեստի թանգարանում կազմակերպված «Բարեկենդանը» հեքիաթի ինտերակտիվ բեմականացմանը, որի ընթացքում նրանք ոչ միայն մասնակցել են բերմադրությանը, այլև գունեղ դիմակահանդեսին՝ ազգային երգերով ու խաղերով: Իսկ վերջում կպատրաստեցին ու համտեսեցին Բարեկենդանի խորհրդանիշ համարվող փոխինդը:

Նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում հայրենասիրության ձևավորման և հայրենաճանաչողության դաստիարակման հրաշալի միջոց է նաև հայ ժողովրդական մշակույթին ծանոթացումը:

Ժողովրդական մշակույթը երեխաների մեջ հայրենասիրական զգացմունքների զարգացման աղբյուր է: Ժողովրդական արվեստը, ինչպես ընդհանրապես արվեստը,

բազմաֆունկցիոնալ է, և գործառույթներից մեկը դաստիարակչական է: Հայ մշակույթը հնարավոր չէ պատկերացնել առանց ժողովրդական արվեստի, որը բացահայտում է հայ ժողովրդի հոգևոր կյանքի սկզբնական ակունքները, հստակ ցույց է տալիս նրա բարոյական, գեղագիտական արժեքները, գեղարվեստական ճաշակը և հանդիսանում է նրա պատմության մի մասը: Բանավոր ժողովրդական արվեստը, երաժշտական ֆոլկլորը, ժողովրդական արվեստն ու արհեստը պետք է ավելի շատ արտացոլվեն մատաղ սերնդի կրթության և դաստիարակության բովանդակության մեջ այժմ, երբ այլ երկրների զանգվածային մշակույթի նմուշները ակտիվորեն ներմուծվում են երեխաների կյանք, կենցաղ ու աշխարհայացք: Եվ եթե խոսենք մատաղ սերնդի կողմից իրենց կյանքի իդեալների, գեղագիտական արժեքների, գաղափարների ընտրության հնարավորության մասին, ապա պետք է խոսենք նաև երեխաներին ազգային մշակույթի և արվեստի ակունքներն իմանալու հնարավորություն տալու մասին:

Հայ ժողովրդական արվեստի նմուշներին մեր սաներին ծանոթացնելու նպատակով հետաքրքիր ու հաջողված պարապմունք ենք ունեցել՝ որպես նյութ օգտագործելով դրվագներ <<Անահիտ>> մուլֆիլմից: Դիտել ենք մուլտֆիլմից հատվածներ՝ հատկապես երեխաների ուշադրությունը կենտրոնացնելով Վարդավառի տոնակատարությունը ներկայացնող հատվածներին, որտեղ գեղեցիկ կերպով ներկայացվում է հայ մշակույթը՝ իր ողջ հմայքով: Ապա փոքրիկ նյութ ենք ներկայացրել հայկական գորգերի ու գորգագործության դարավոր ավանդույթների մասին, դիտել ենք սահիկաշար, որտեղ ներկայացված էին հայկական գործագործության շքեղ նմուշներ, որ պահվում են Հայաստանի պատմության թանգարանում: Երեխաների ուշադրությունը հրավիրել ենք գորգերի նախշերին, ապա նաև ցուցադրել ենք տարազների մի քանի գեղեցիկ նմուշներ: Իսկ գործնական մասում երեխաներին հանձնարարվել է մուլտֆիլմում և սահիկաշարում տեսած գորգերի զարդամոտիվներով սեփական գորգերը ձևավորել:



Վ. Սուխոմլինսկին, ընդգծելով հայրենասիրական ու հայրենաճանաչողական կրթությանոլորտի դժվարությունները, գտնում էր, որ «հայրենիքի նկատմամբ սերը կամքի ուժի է վերածվում այն ժամանակ, երբ մարդու գիտակցության մեջ ամրապնդվում են հայրենի վայրերի և լեզվի հետ կապված կերպարներ, երբ առաջանում է հպարտության զգացում, որ այս ամենը քո երկիրն է[3]:

[3]Սուխումլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Կոլեկտիվ դաստիարակության մեթոդիկա, Եր., Լույս, 1986թ., էջ 151:

Ուստի կարևորում ենք, որ հայրենասիրության ու հայրենաճանաչության գործընթացն ուղեկցվի երիտասարդ սերնդին հարազատ երկրի ու ժողովրդի պատմական, աշխատանքային, պաշտպանական, մշակութային և հոգևոր աշխարհի արժեքների հետ կապող անմիջական շփումներով: Այս պարագայում մեծ է մշակութային կենտրոնների, այդ թվում նաև թանգարանների դերը, որոնք, ինչպես գիտակրթական, այնպես էլ մշակութային կենտրոններ լինելով, ունակ են լուծելու անձի զարգացման և կրթության հետ առնչվող ամենաբազմազան խնդիրներ: Թանգարանային ցուցանմուշները բացառիկ հնարավորություն ունեն միաժամանակ ազդելու մարդու մտավոր, կամային և հուզական ոլորտների վրա, իսկ յուրաքանչյուր ցուցահանդես իրենից ներկայացնում է գիտելիքների, դատողությունների, գնահատումների և զգացմունքների համալիր ծրագիր: Թանգարաններն ունեն ցուցանմուշներ հավաքող, պահող, պահպանող և սերունդներին փոխանցող գործառույթ, որի միջոցով նրանք հաջորդ սերնդին են փոխանցում ոչ միայն մշակութային արժեքները և նրանց կոնկրետ պատմությունը, այլև դրանց միջոցով, ըստ իրենց տեսակի (պատմության, գրականության, երկրագիտական և այլն), ներկայացնում են տվյալ երկրի ամբողջական կամ որևէ ոլորտի պատմությունը: Թանգարաններն իրենց հիմնական և ժամանակավոր ցուցադրություններով ներկայացնում են այն կարևոր պատմական իրողությունները, փաստերը, որոնք պարտավոր է իմանալ իր հայրենիքը սիրող և հարգող յուրաքանչյուր քաղաքացի, քանի որ այսօր մասսայական բնույթ է կրում ապատեղեկատվությունը, իսկ որպեսզի հարկ եղած դեպքում պարզաբանվի և հարկ լինի պաշտպանել հայրենիքը, հայրենասերը պետք է զինված լինի ճշգրիտ գիտելիքներով, պետք ճանաչի իր ազգային մշակույթն ու արժեքները: Հայրենիքը պաշտպանում են ոչ միայն զենքով այլև գիտելիքներով՝ դրանք տեղին դրսևորելով և կիրառելով:

Թանգարանի՝ որպես դաստիարակող ոլորտի, առանձնահատկությունը տրամադրած տեղեկության պատկերավոր բնույթն է: Այստեղ ոչ միայն լսում, այլև տեսնում ու ծանոթանում են այն առարկաների հետ, որոնք առնչվել են պատմական կարևոր իրադարձություններին՝ դրանց հաղորդելով ավելի գիտակցված բնույթ և ապահովելով ընկալման առավել հաճելի ու հեշտ տարբերակ:

Ելնելով այս ամենից և գիտակցելով թանգարանի դերը հայրենաճանաչողության բարձրացման գործում մեր ավագ խմբի սաների հետ այս տարի երկու այց ենք կատարել

թանգարան: Այցելել ենք Երևան քաղաքի պատմության թանգարան, այնուհետև՝ Մաչանենց տուն:

Առաջին այցի նպատակն էր երեխաների հետ ուսումնասիրել այնպիսի հարցեր, ինչպիսիք են.

- Ով եմ ես,
- Ովքեր էին իմ նախնիները,
- Ինչ մշակութային արժեքներ ու ժառանգություն են նրանք ավանդել ինձ,
- Որտեղ եմ հիմա գտնվում, որն է իմ հայրենիքը,
- Ինչպես է փոխվել իմ ու իմ նախնիների կյանքը պատմության ընթացքում,
- Ինչպիսի արժեքներով կարող եմ հպարտանալ՝ որպես ժամանակակից հայ մարդ:

Երկրորդ այցի նպատակն էր Մաչանենց տանը կազմակերպվող վապետաց դասերի շրջանակներում ամրապնդել ու խորացնել՝ առարկայական դարձնել այն գիտելիքները, որ ստացել էին նախորդ այցի շրջանակներում:

Այսպիսով կարող ենք ասել, որ հայրենաճանաչողությունն ու հայրենիքի նկատմամբ

սեր, նրա նկատմամբ պարտավորությունների փունջը, ինչպես մյուս բարոյական որակները, կարիք ունեն նախ սերմանման, ապա հասունացման և այդ գործընթացը

պետք է սկսել հենց նախադպրոցական կրթական հաստատություններից, քանի որ հենց այս տարիքում են երեխաներն ամեն ինչ ընկալում հույզերով ու զգացմունքներով: Իսկ այն գաղափարը, որ անձի մեջ դրվում է բարձր հուզականության մթնոլորտում, դատապարտված է հավերժ գոյատևման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ժամանակակից աշխարհում, երբ մարդկությունը գնում է մշակութային, տնտեսական ու քաղաքական համահարթեցման ճանապարհով, փորք պետությունների համար գոյության պայքարի կենտրոնում ազգային ինքնության ու բազմազանության գիտակցումն ու պահպանումն է: Հենց այս ֆոնին է, որ վերջին շրջանում մեր երկրում թեկուզ խաղաղության բացակայության պայմաններում, մեծ հանրային հնչեղություն են ձեռք բերում ազգային ու եկեղեցական տոնակատարություններին նվիրված արարողությունները, փառատոներն ու այլ միջոցառումները:
- Հայրենաճանաչության բարձրացման ու մատաղ սերնդի մեջ հայրենասիրական գաղափարների ներդրման լայն հնարավորություններ են ընձեռում ազգային բանահյուսությունը, տոները, թանգարաններն ու ժողորդական արվեստի նմուշները: Մանկավարժի խնդիրն է ստեղծել համապատասխան նպաստավոր միջավայր ու հնարավորություն ընձեռել երեխաներին հաղորդակցվելու ազգային հետ, ճանաչելու ու սիրելու ազգայինը:
- Տոնածիսական համակարգերը պայմանավորում ու արտահայտում են ժողովրդի արժեհամակարգային մի շարք տարրերը, մարդկային փոխհարաբերությունների մասին պատկերացումները ու դրանց յուրացումը, լավագույնս, կարող է նպաստել ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, ազգային արժեքների յուրացմանն ու արժեհամակարգի կերտմանը, մեկ բառով հայրենաճանաչողությանը:
- Ուրիշ ոչ մի միջոց չի կարող աշակերտներին այնքան կոնկրետ պատկերացում տալ արդյունաբերության, քաղաքաշինության, պատմության ու մշակույթի, ժողովրդական արվեստի մասին, որքան էքսկուրսիաները դեպի մշակույթի, արվեստի ու ազգագրության թանգարաններ: Սրանց միջոցով է, որ աշակերտները կարողանում են լսածը տեսնել, հաճախ նաև կիրառել ու գործի դնել:
- Ազգային մշակույթը ունի հազարամյակների պատմություն ու հարուստ նյութ բավական է միայն մանկավարժը կարողանա ճիշտ մատուցել այն իր սաներին ու ապագայի բարձր արժեներ կրող, հայրենիքը սիրող ու գնահատող սերնդի պակաս մեր երկիրը չի ունենա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սուխումլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Կոլեկտիվ դաստիարակության մեթոդիկա, Եր., Լույս, 1986թ.:
2. Данилюк А. Я., Кондаков А. М., Тишков В. А. Концепция духовно-нравственного развития и воспитания личности гражданина России. – М. : Просвещение, 2009.
3. Խառատյան Հ., Ազգային տոներ և ծեսեր, https://marinemkrtchyan.files.wordpress.com/2016/04/d5b0d680-d5add5a1d5bcd5a1d5bfd5b5d5a1d5b6-c2abd5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5aed5a5d5bdd5a5d680-d5bfd5b8d5b6d5a5d680c2bb.pdf, հասանելի է:
4. Высказывания лихачева о народной культуре, https://dragon72.ru/vyskazyvaniya-lihacheva-o-narodnoy-kulture, հասանելի է: